# 14. ՉԵՌԼ ԴԱՎԱՍԻ*

Կէլնի, չէլնէ մեյ խապ մարթ: Էսա մարթուն էրկու խապ ախչիկ կէլնի: Էսա ախչըկներն էլ երեսուն խապ ոչխար կեր ուրենց՝ կպահենէն կւարածայուցեն:

Ավուր մեկ իրիկվան դեխ ոչխար տուն պերելու գյախ, պըստիկ քյոր մեչ անտառին մեյ խապ պըստիկ անասու մը կկընդըրնի, կգյըրկի կպերի ուր տուն, խւսյ-պան կկիրիցուցի, կշախի, կճոճացուցի քիչըմ:

Ավուր մեկ էսա երկրի թաքավոր խեփ ուրիշ երկրի թաքավորին կըռիվ կանի: Ուր խոռի մեչ ի՞նչ կանդար մարթ որ կա՝ կժողվի, որ հա մեյմեկելու եփնանց էօրեռխկի կըռվի դաշտ: Էսա մարթուն էլ կկանչեն, կպահենէն, որ էօրեռխկեն կըռիվ:

Էսա մարթու ճհչ ախչիկն ի, կասի. «Իմ խե՛ր ըլխթյար ի, մեղք ի, որ էրթա կըռիվ: Ես պիտի մարթու խալավ խայնեմ, ծին խեծնեմ, էրթամ իմ խոր տեղ ւասքըրութեն անեմ, թող իմ խեր գյա տուն»:

Ախչիկն ի, կէլնի մարթու խալավ կխայնի, սիլախներ կկապի, սև ծին կխեծնի, կքըշի կէրթա մոտ խեր, կասի. - Հայրի՜կ, տյու ըլխթյար ես, տյու չես կանա էրթա կըռիվ անէ, տյու տառցի տուն, ես քյո տեխեն կէրթամ կըռիվ կանիմ:

Խերն ի, որ էսա պան կլսի, կասի. - Ախչիկ, բալամ, կըռիվ որ կւասեն՝ ոչխար արածայուցելուն չի նըմանէ, տյու չես կանա կըռիվ ւանէ, կըռիվ ախչըկան պան չի:

Ախչիկն ի, կասի. - Չէ՛, հայրիկ, տյու մի վախյնւա, ես քյո ախչիկն եմ, ես կըռվից չեմ վախենա:

Խերն ի, կասի. - Շատ աղեկ:

Ինքյ կէլնի տուս, ախչիկ կմտնի խոր տեղ, որ էրթա կըռիվ անի:

Կես կիշեբին էսա ախչըկան կխանեն վեր, կէօրեռխկեն մեչ տիմւսցի տոսին, որ կւայնի էնտեղ նեռքաթ պախի:

* Անտառի ուղտ (թ.բ.):

Ախչիկն ի, ուր սիլախներ կկապի, կխեծնի ուր ծին, կէրթա կկայնի մեջ էտա փոսին, աման հախու դըռ-դըռ կդողա:

Էսա ախչկան խերն ի, կասի. «Ես մեյ խապ պիտի իմ ախչըկան ջըռքիմ, խենքյ աղորթմանց չի՞ վնխյնա, կանա՞ կըռիվ անե»: Կէլնի թուր կչըլտի, կպըռնի ծեռ, թավալմ կէրթա կմըտնի էտա փոսի քարերււց մեջ: Էն գյախ որ ախչիկ վեր ուր ծիյուն նըստուկ կուգյա մեջ փոսին, խեր թուր ծեռ պիրդան կթըռնի իսոր առաճ, կբոռա. - Տեղեղ իրար չդեպնիս, թե չէ քյե կէօրեոխկեմ մոտ յոթ տարվան մեռըլներ:

Ախչիկն ի, որ էսա ծեն կլըսի, կտիսնա որ մարթ մ'էլ գյեո թուր ծեռ կուգյա դեխ զինքյ, կադըմներ կկոտրի, բոռալեն կփախնի, կէրթա:

Խերն ի, որ էսա պան կտիսնա, մեյ խապ կծըծղա, կդառնա կբոռա. - Ախչի՛կ, ախչի՛կ, մի փախնի, մի վախենա, ես քյո խերն եմ:

Ախչիկն ի, որ ուր խոր ծեն կլըսի, ետ կդառնա՝ աման ամոթու էլ չի կանա իրիշկա խոր երես:

Խերն ի, կասի. - Ախչիկ, բալամ, ես քյե չասե՞ցի, որ կըռիվ անել՝ ոչխար արածալ մեկ չի, կըռիվ գոռն ի, զոռ: Տյու ախչիկ ես, տյու դո՞ր, կըռիվ անել դո՞ր:

Խերն ի, ախչըկան էսա պաներ ասելուց սորա՝ երեսներ կպաքյի, կասի. - Կընա տուն, մոտ քյո քյոր, կընա զիկ խամար տուվա սրեքյ:

Ախչիկն ի, խոր առճե ըռըսկնա ամոթով էլնելուց սորւս՝ ծեն կկըտրի, խոր ծեռ կպաքյի, կինի ճանբախ, կէրթա տուն:

Էն մեկել օր իրիկուն պըստիկ ախչիկ ուր դաշտ կընդած կենդանիին խաց կիրեցուցելու գյախ, բիրդան էսա կենդանիին լեզու կէլնի, կասի. - Ախչիկ, քյո ճնչ քյոր կընաց՝ չկառցավ աքյըրութեն աներ, դառցավ էկավ: Ըսպըրիս էլ տյու մարթու խալավ խագյի, սիլախներ կապի, իմ պերան մեյ խապ զյամ զարկ, զիկ խեծի էրթանքյ: Որ կխասնենքյ քյո խոր մոտ, քյո խեր քյե ինչ որ կասի, տյու չդառնաս ետ: Եփին տըրեն էն կէլնի տյուս, քյե կմտուցի ուր տեղ մեջ աքյըներււց: Կես կիշերին կուգյան քյե կխանեն վեր, կտանեն մեջ մեյ խապ փոսիմ, որ էնտեղ ներքւթ պախես: Տյու որ կմըտնես էն փոս, կըտորմ կմընա թե չէ՝ մարթըմ թուր ծեռ բոռալեն կվազի դեխ քյե: Տյու չէլնի վախենաս: Էն որ կա՝ քյո խերն ի, կուգյա էնտեղ, որ քյե ջըռոի: Տյու խետ որ էն մարթ կտիսնաս՝ քյո թուր քաշի, զանգյույով զարկ իմ կողերաց, զիկ քըշի վեր էտա մարթուն: Աման աջալա չանես, չզարկիս: Էն որ կա՝ քյո խերն ի, տյու որ ըտըսկըհա քըշես վեր ինոր, էն կբոռա, կասի. «Մի զարկե, ես քյո խերն եմ»: Էն գյախ էն կուգյա քյո ճակատ կպաքյի, կասի.

«Տյու ա́ղորթմանց քաջ ախչիկ ես»: Էն գյախ էն կթողնի, կդա̈ռնա եփ, փյու կմնաս ինոր փեղ, ասքյըրութեն կանես:

Ախչիկն ի, որ էսա պան կլըսի, կէլնի մարթու խալավ կխայնի, սիլախներ կկապի, ուր կենդանին կթախըմի ուր քյուրոչ, կասի. - Ըսփըրիս ես պիփի էրթամ ասքյըրութեն անեմ իմ խոր փեղ, իմ խեր խեղճ ի, ըխթյար ի, թող դառնա փուն:

Կայ պա́րև կանի ուր քյուրոչ, կինի՜, կինի ճանբախ, կէրթա́:

Ախչիկն ի, շափ կէրթա, քիչ կէրթա, կխասնի ուր խոր, կասի. - Աղա, ես էկեր եմ, որ քյո փեղ ա̈սքյըրութեն անեմ, էրթամ կըռիվ, փյու դա̈ռնաս փուն:

Խերն ի, որ ախչըկան էսա խա́բար կըլսի, կասի. - Ախչի՛կ, բալամ, կըռիվ անել ոչխար արածայուցելուն չի նըմանի, փյու ախչիկ ես, փյու դի՞ր, կըռիվ անել դի՞ր:

Ախչիկն ի, կասի. - Աղա, փյու մառախ մ'անե, էն ոչխար արածայույող կըռիվ էլ կանա անի:

Խերն ի, կփիսնա որ ինչ կանի՝ ախչըկան չի կանա համոզե՝ կասի՝ շափ աղեկ, ինքյ կէլնի փյուս, ուր ախչըկան կմըփույի ուր փեղ մեչ ա̈սքյըրներույ:

Կես կիշերին էսա ·ախչըկան կխանին վեր, կէօրեռխկեն մեչ փիմայի փոսի մեչ, որ նեռբա́թ պախի:

Խերն ի, կասի. «Ես մեյ խափ պիփի իմ ախչըկան ջըռբեմ, խենքյ էսա ախչիկն էլ էն մեկել ախչըկան պես վախկո՞փ ի, թե չէ»: Կեսկիշերին խերն ի, որ կփիսնա թե ուր ախչըկան էօրեռկեյին մեչ փոսին նեռբա̈թի, ինքյ կէլնի թուր կչըլփի, կպըռնի ծեռ, յավաշըմ կմըփնի մեչ էփա ծո̈րին: Բիրդա̈ն քյարերայ մեչից կթռնի փյուս, թուր իրա̈ր կուփա, կբոռա. «Տեղեփ իրա̈ր չդեպնես՝ թե չէ քյե կէօրեռխկեմ մոփ յոթ փարվան մեռըլներ»:

Ախչիկն ի, որ էսա պան կլըսի՝ համան զա̈նգյուն կզա̈նի ուր ծիյու կողեր, ծին կքյշի վեր էփա մարթուն, կբոռա. - Աղոթք արա, պոծի, խեփ խասա, խոգյիփ կառնեմ:

Խերն ի, կփիսնա որ ուր ախչիկ առանց վախենալու քյշեց էկավ ահայի որ ուր պիփի զանի՝ կբոռա, կասի. «Ախչիկ, չզա̈նես, ես քյո խերն եմ»:

Ախչիյն ի, որ էսա պա́ն կլսի, ծիյուց կէճնի փակ, կփա̈թյութվի ուր խոր:

Խերն ի, ախչկան կգյըբկի, երեսներ կպա̈քյի, կասի. - Ա̈ֆա̈րեմ, իմ ախչիկ, գյեռ նոր ավափայի, որ փյու ա́սքրութեն կանաս անե: Կնա̈, բա̈լամ, ասփված խեփ քյե:

Խերն ի, էսա պան ասելուց սորա, ուր ախչկան կայ պա́րև կանի, կթողնի կէրթա́ փուն:

Էն մեկել օր առավոտուն էսա ախչկան՝ խեփ ա̈սքրներաց կէօրեռխկին կովի դաշտ:

Ախչիյն ի, որ կէրթա կովի դաշտ, կվախենա, կբաշլայի դողալ: Ծին ի, որ էսրա դողալ կտիսնա, կասի. - Ախչիկ, ի՞նչ էլավ քյե, ի̈նչի՞ կդողաս, ի՞նչ էլավ քյե, մի վախենա: Տյու զիկ պիլոր-պիլոր ֆռացու, չուր փըռփուռ տա վեր իմ պենին: Զանգյուն զարկ, իմ գյամ թող պյաց, տյու էլ թուր չլտի, պռնի ծեռտ, մենակ էտա թուր իրար տու, էլ պան մի անե, էլ պանի մի խառվե, ես կիտեմ ինչխ կանեմ, կանեմ:

Ախչիյն ի, ծիյու ասածի պես պիլոր-պիլոր ծիյուն կֆըռացուցի, չուր ծիյու փըռփուռ կուտա վեր պենին, գյամ կթողնի պաց, զանգյուն կզանի, թուր կչըլտի, պռնի ծեռ՝ կբաշլայի իրար տալ: Ծին ի, որ տեղ որ կռիվ սաստիկ ի, կքյշվի էնտեղ, կբաշլայի ճարդել: Վարիասլ, ըսկուն կանի, որ էդա դիմացի թա̈քավորու ասքըրներաց դարմատազան կանի:

Էսա կովի գյախ թաքավոր կայներ էր վեր պանցր դարին, կռիվ թամաշա կաներ: Կտիսնա որ ուր ա̈սքյըրներուց մեչեն մեյ խափ ջահել ասքյարըմ խեծե վեր ծիյուն, կքյշի ըստեխ՝ կճարդի, կքյշի էնտեխ՝ կճարդի: Վարիասլի, ըսկուն կանի, որ էտա դիմացի ասքյըրներուց բիթուն կճարդի, կփախցուցի:

Խեփ որ կռիվ կպռծնի, թաքավոր ուր ասքյըրներուց կկանչի, կասի. - Վո՞վ էր էն բուբագյիթ ասքյար, որ աչուծախ կճարդեր, էն որ չէլներ, մեր ա̈սքյըրներ բիթուն ճարտվեր ին:

Թաքավորու ա̈սքյըրներն են, որ էսա պա̈ն կլսեն, մե մեյ-մեյ դեհեն կբոռան, կասեն. էն կասի՝ ես եմ, էն կասի՝ ես եմ:

Թաքավորն ի, կասի. - Իմ տեսած մարթ մեյ խափ էր, տյուք քյառսուն մարթ եքյ, դոդրի ասեքյ, տիսնամ խենքյ վո՞վ էր:

Ա̈սքյըրներն ի, էլմ'էլ մե մե-մեյ դեհեն կբոռան, կասեն. էն կասի՝ ես եմ, էն կասի՝ ես եմ:

Թաքավորու ճար կկտրի, ա̈մր կանի, որ քյառսուն գյազ լենքյ փոսըմ փորին, էն ասքյըրներ վո՛վ որ կասի, թե՝ ես եմ, պիրի բիթուն էլ գյան, ուրենց ծիյերով էտա փոսից թռնեն էն մեկել իրես:

Փոսն ի, կփորեն, էտա ասքյըրներ մեյ-մեկ ուրենց ծիյերով կուգյան կթռնեն էտա քյառսուն էլ կինեն մեչ էտա փոսին: Հա̈ն իրեն դրին էտա ախչիկ կուգյա. կուգյա կխասնի փոսի մոտ, ուր ծին կֆռացուցի, կֆռացուցի չուր փըռփուռ կուտա վեր ծիյու պենին: Ծիյու գյամ կթողնի պա̈ց, զանգյուն կզա̈նի թե չէ՝ ծին կթռնի փոսի էն մեկ իրես՝ կկայնի:

Թաքավորն ի, որ էսա պան կտիսնա, կասի. «Ահանչ գյեռ էդա յի էն բուբագյիթ տղեն, որ ես կասի»:

Թաքավորն ի, էսա ախչկան կկանչի, կտանի մոտ զինքյ, կիրիշկա էսա փղի խորոտկութեն, քաքազյիթութեն, կասի. - Է՜յ կտրիճ փղա, քյանի որ փյու ըսկընեմ կտրճութեն արիփիր, իմ փյուշմընի գյլեոխ իմ առճն կոռ արիփիր, ես՝ իմ մեկ ախչիկ, էն էլ կուրբան իմ արե քյե:

Թաքավորն ի, կառնի էսա լաճուն, կտանի ուր տուն, կպսակի վեր ուր ախչկան:

Մեկ-երկ օրից սորա թաքավորու ախչիկ կիրիշկա որ ուր մարթ իսկի ուր կարևորութեն չի տա, նա ուր յաթաղ կուգյա, նա էլ կուգյա խետ ուր խարար կուտա:

Էսա թաքավորու ախչիյն ի, որ կտիսնա ուր մարթու ուր խետ ինչխ վարվել, շատ կպարկանա: Մեկ օր կէլնի ուր մոր կասի. - Մարե, ես թաքավորու մ'ախչիկ էլնեմ, իմ մարթ հասարակ ապյար մ'էլնի, գյա խետ զիկ պսայվի, գյա իմ էօղեն մտնի, զիկ իսկե կարևորութեն չի տա, խե զիկ խաբար չի տա, ես էլ էն իրկան էօղեն չեմ մտնե, էն իրկան պիտի ըսպանեքյ:

Սերն ի, կէլնի թաքավորուն կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո ախչիկ կասի. «Իմ իրկան պիտի ըսպանեքյ: Էն ըսկուն էլնի՝ որ ես թաքավորի ախչիկ էլնեմ, զիկ իսկի կարևորութեն չի տա»:

Թաքավորն ի, կասի. - Ա՜յ կնիկ, փյուք ծռեր եքյ, ի՞նչ եքյ. էն մարթ որ չէլներ, ես խողով-ճրով ընցիր ի, ես ի՞նչխ էլնեմ էն մարթուն ըսպանեմ:

Թաքավորու կնիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես չեմ կիտե, քյո ախչիյն ի կասի, կասի՝ յա ինոր կըսպանեքյ, յա չէ՝ ես զիկ կըսպանեմ:

Թաքավորն ի շատ կմտածի, քիչ կմտածի, կասի. - Կնիկ, ես դողրի դողրինա էտա մարթուն չեմ կանա ըսպանե. փյու կնա ես խետ իմ վազիրն կմտածեմ՝ էտա լաճուն կուրխիսյուցեմ:

Թաքավորու կնիյն ի, կթողնի, կէրթա:

Թաքավորն ի, կկանչի ուր վազր, կասի. - Ի՞նչխ անենքյ, որ էսա իմ փեսեն մեջտեղից վերուցենքյ:

Վազիրն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյե քյաղաքյըմ կա որ էսա քյառոսուն տարի յի ապստամբեր ի, քյե վերգյի չի տա, ինչ կանդար որ մարթ էօրեոխկեր ես, բիթուն էլ սպանվեր են, էն շան էլ էօրեոխկի, թող էրթա էնտեղ սպանվի, պռծնես փյուն՞էլ, քյո ախչիկն էլ:

Թաքավորն ի, կկանչի ուր փեսին, կասի. - Զիկ քյաղաքյըմ կա, որ էսա էլավ քյառոսուն տարի յի որ ապստամբեր ի՝ զիկ խառջ-խառաջ չի տա, քյե թաքուտմ ասքյար կուտամ, պիտի էրթաս էտա քյաղաքյ կոտորես, հպատակցուցես, դառնաս խառջ-խառաջ ժողվես, պիրես:

Փեսեն ի, որ էսա պան կլսի, կթողնի, մռութ-մալուլ կէրթա դէխ ուր ծին, կբաշլայի ծիյուն թիմրել:

Ծին ի, որ կփիսնա թե էսա մարթ մռութ ի, կխաոդուցի, կասի. - Ի՞նչ էլե քյե էսօր, որ ըսկնա մռութ ես:

Էսա մարթն ի, կասի. - Վալա, թաքավոր զիկ կանչեց. ասաց. «Պիտի էրթաս, զիկ քյաղաքյըմ կա որ ապսպամբեր ի, խառջ չի տա, պիտի էրթաս զանես, կոտորես, խառջ-խառաջ առնես, պիրես»:

Ծին ի, կասի. - Տյու մտռախ մ'անի. կէրթաս էլ, կպիրես էլ: Համան ես ինչխ կասեմ, ըսկուն պիտի անես: Կէրթաս թաքավորուն կասես. «Թաքավոր ապրած կենաս, զիկ քյո ասքյըրներ լազմ չեն: Մենակ թե զիկ քյասուն խապ կայիմ ճյորի տուր, մեյ խապ էլ ճռչ էրկթի թոխմախ»: Ես տյու մեյտեխ կէրթանքյ, կխասնինքյ էտա քյաղաքյ: Վեր էտա քյաղքյի ճամխուն մեյ խապ կաղնու ճռչ ծառըմ կա, մեյ խապ աժդհա մարթըմ պառկե էտա ծառի քով, քյներ ի: Տյու խետ որ կխասնես էտա մարթու մոտ՝ կէճնես տսւկ, էտա էրկթե թոխմխով էրկու խապ ըսկուն կայիմ կզանես մեչ էտա մարթու գլխուն, որ գլեոխ կտրվի, ինքյ ուր գլեոխ ինան առուն խառվի իրար: Էտա մաքթ որ կա, էտա քյաղքյի ճռչն ի, քյնույ կաքյխի, կէլնի վեր, տյու մեյ խապ կայիմ ծենով բռռա վերեն, ասա. «Դե չոտ կընա քյաղաքյ, էսա քյասուն տարվան խառջ-խառաջ որ չեքյ տվե չուր էսօր՝ չուր ժողվի, առ արե. թե չէ որ դառսյա վեր ծե, ծեր քյաղաքյ, ծե զմեն խողով-ճրով կընցուցեմ: Էսա աժդահա մարթն ի, կէլնի խելքամաղ-խելքամաղ կէրթա դէխ քյաղաքյ, տյու վազե խոռ եփիվանց մեյ խապ էլ էտա թոխմխով տուր մեչ ինոր գլխուն, ասա. «Ի՞նչ մեռլի պես դըրե-դըրե ինգյեր ես ճամբախ, չոտ արա, կնա՛, թե չէ՝ վուսկռներտ բիթռնն կսխկեմ»: Էն մարթն ի, կէրթա, հայ կարեն կփոթույի մեչ քյաղքյին, էրկու սահաթվան խառջ-խառաջներ կժողվի, կպառնա էսա ճորիքյ, կպիրի: Տյու մեկել կէլնես կկայնես, էսա թոխմխով մեկել կուտաս մեչ ինոր գլխուն, կասես. «Ի՞նչի էսականդար անգյնցար»: Սորա տյու քյո քյասուն ճյորիքյ պեռներ լցուկ կառնես, առոքյ-փառոքյ պիրես, թասլիմ կանես թաքավորուն:

Փեսեն կէրթա թամանդեն կթալի, թաքավորուն կասի. - Թաքավոր ապրած կենաս, զիկ քյո ասքյըրներ լազմ չի, զիկ քյասուն խապ ճյորի տուր, մեյ խաւր էլ էրկթե ճռչ թոխմախըմ, ես կէրթամ քյո խառջ-խառաջ կպիրեմ:

Թաքավորն ի, ամր կանի վազիրին, կասի. - Ինչ որ իմ փեսին լազմ ի, ինչ-որ կուզի՝ տուր:

Էսա վազիրն ի, կէլնի խալայեղներ կէօրեոխկի, կէրթան քյասուն խապ խորոտ, կայլն-կրճիր ճյորի կառնեն, կպիրեն, ինան մեյ խապ էլ էրկթե ճռչ թոխմախըմ, կուտան էսա փեսին:

Փեսեն ի, կէլնի ուր ծին կխեծնի, ճեոիքյ կիսկի առած, էրկթե ճհ̈չ թոխմախն կտնի գյոքյ, կինի ճամբախ, կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա, կէրթա կխասնի չուր էտա քյաղաքյ:

Ալա չի խասե քյաղքյին, էտա ճամխի վերեն ծիյու ասածի պես մեյ խատ ճհ̈չ կաղնու ծառ կտիսնա: Կէրթա էտա ծառի տակ որ կխասնի, ծիյուց կէճնի տակ, կտիսնա որ մեյ խատ գյեռ աժդահա մարթըմ պառկե էտա ծառի տակ, քյներ ի: Համան ուր մոտի թոխմախ կվերուցի ամենայն զորությամբ էրկու խատ կէճուցի մեչ էսա մարթու գյլխուն:

Էսա մարթն ի, քյնուց կզարթնի կէլնի վեր, կտիսնա որ ինքյ ուր գյլեոխ արուն-մարուն խառվե իրար: Կէլնի վեր, կտիսնա, որ էսա լաճ բաքագյիթի պես անվախ կայնե ուր առած:

Էսա մարթն ի որ կտիսնա էսա լաճու կտրճութեն զարզանդ կուգա վերեն, խելքյամաղի պես զեռրեով կասի. - Ի՞նչ կուզես, կտրիճ, ասա, քյո ուզած ի՞նչ ի:

Էսա լաճն ի, կասի. - Էսա քյառոսուն տարի էլավ որ տյուք մեր թաքավորին խառջ-խառաջ չէքյ իտա, մկա էս սահաթին պիտի էրթաս էն քյառոսուն տարվան խառջ ժողվես պիրես տաս: Որ չպիրիր՝ վա՜յ իկե քյե .էլ, ծեր քյաղքյի ժաղամաթին էլ տարեր ի, ըսկուն կանեմ ծե, որ խողով-ճրով էլ էսա աշխրի մեչ չէրեաք:

Էսա աժդահա մարթն ի, կտիսնա որ ճար չկա, աղորթմանց ուրմից էլ կտրիճ բաքագյիթ ի, թե որ չէրթա խառջեր ժողվի, պիտի գյա, ուրն էլ, ժաղամաթին էլ բարբաթ անի, համան յուսյուլովմ փեշերը կժողվի մեչ էրա քյոտինքյին, կդառնա դիխ, էսա լաճ կասի, կասի. - Էյ բսրագյիթ տղա, թող քյո խաբարն էլնի, զինկ էրկու սահաթ ժամանակ տուր, էրթամ քյաղքյից քյո խառջ ի՞նչ կանդար ի՝ ժողվեմ պիրեմ: Որ չպիրի՝ ինչխ կիտես, ըսկուն արա:

Լաճն ի, քյառոսուն ճյորիքյ կուտա, կուգա էսա աժդահակին, կասի. - Դե առ կնա, շուտ լից, առ արե ըստեղ, ես էսա ծառի տակ քյե կաչկեմ:

Աժդահակն ի, ճյորիքյ կիսկի առած որ պիտի էրթա, համան էսա լաճ ծիյու ասածի վերեն մեյ խատ էլ ճհ̈չ թոխմախ կուտա մեչ էսա աժդահակի գյլխուն, կասի. - Ի՞նչ զեռրեով իրար կդեպնես, շհ̈՜տ ծեռ-ոտ իրար տու:

Էսա աժդահակն ի, ճյորիքյ կէսկի առած, խելքյամաղ-խելքյամաղ կառնի կէրթա քյաղաքյ:

Էսա աժդահակն ի, էսա ճյորիքյ կառնի, կէրթա քյաղաքյ. քյաղքյի մեչ հալա հալեմ կանի, կասի. - Դե շուտ արեքյ, թաքավորու քյառոսուն տարվան խառջեր ժողվեքյ, տվեք, - կդառնա կասի, - թաքավոր ըսկուն մարթըմ ի էօրեոխկի վեր մեր քյաղքյին, որ

չիփանքյ՝ մե խողով-ճրով պիփի ընյույի. փեսեքյ. եւս իմ գյլեոխ՝ ծե խղճայեքյ. էլեքյ, էլեքյ շոփ ժողվեքյ փվեքյ, եսա կրակ մեր քյաղքյիy ազափեքյ, թե որ չէ՝ բիթունս էլ պիփի մեռնենքյ:

Ժաղամաթն ի, կփիսնա որ ուրենy մեծավորի գյլեոխ ըսկնա ճարփված ի, ուրենքյ-ուրենքյ կասին. «Որ մեր մեծն չկառյավ էփա մարթու դեմ կայնե՝ մնայ մե՞նքյ կայնենքյ. էլեքյ, էլեքյ շոփ ժողվենքյ փանքյ, եսա կրակ մեր քյաղքյիy ազափենքյ»: Կասեն, կէլնեն մեչ էրկու սահաթվան ինչ կանդար որ խառջ ունեն փալիքյ, կժողվեն, կպառնան էփա քյառոսուն ճյորիhիփերայ, կառնեն կպիրեն:

Եսա լաճն ի, ալա եսա աժդահակ փեղ չի խասի մոփ եսա լաճ, համան եսա լաճ էրկթե թոխմախ կվերույի մեյ խափ էլ կուփա եսա մարթու գյլխու մեչ՝ կասի. - Եսականդար գյախ փյու դո՞ր իր, որ անգյնյւար:

Եսա աժդահակն ի, թամանդեն կթալի, կասի. - Կփրի՛ճ, չեոռով կառյա, ի՞նչխ անեմ, չեոռով ժողվեյին փվին:

Լաճն ի, էփա քյառոսուն ճյորիքյ գյեռ պառյե, սադա ոսկով. կինի ճամբախ՝ կէրթա թաքավորու փուն: Եսա լաճն ի, պառյուկ ոսկիքյ քյառոսուն ճյորիյհիփերավ կառնի, կուգյա թաքավորու սարեն: կէրթա թաքավորուն կասե. - Թաքավոր ապրած կենաս, քյո ուզած քյառոսուն պեռ խառջ այսի՛նչ քյաղքյիy պերի:

Թաքավորն ի, կփիսնա որ ուր փեսեն, կնայ ուր քյառոսուն փարվան քյաղաքյ զոփեy, խառջն էլ առեy էկավ՝ կպռնի ու փեսի ճակափ կպաքի:

Եսա լաճն ի, կէրթա եսա կիշեր ուր կառյոլի վերեն կքյնի չուր լոս:

Թաքավորու ախչիյն ի, կիշեր կաչկի, կւաչկի, որ եսա լաճ գյա ուր մոփ, էլ մ'էլ չի գյա, ինչխ առաճ՝ ըսկուն էլ մկա:

Առափուն ի, թաքավորի ախչիկ կէլնի վեր, կէրթա էլ մ'էլ դողրի ուր մոր մոփ գյանգյափ, կասի. - Մարե, եսա լաճ էլ մ'էլ զիկ կարևորութեն ՝չի փար, ինչի՞. զիկ ի՞նչ կասափ կա՞, որ նա կուգյա, նա կխառյույի, ես ինոր չեմ ուզե, յա կըսպանեքյ էփա փղային, յա ես զիկ կըսպանեմ:

Մերն ի, կէլնի կուգյա մոփ թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, եսա քյո փեսեն էլ մ'էլ առաճվան պեսն ի, նա կէրթա մոփ ախչիկ, նա խաբար կուփա խեփ, նա պան: Մկա ախչիյն էլ էլմ իկե, կասի. յա էփա լաճուն կըսպանեքյ, որ ես իմ ուզած անեմ, յա չէ ես զիկ կապանեմ:

Թաքավորն ի, կասի. - Կնիկ, ես ի՞նչխ էփա լաճուն ըսպանեմ, են կնայ իմ քյառոսուն փարվան ապսփամբ քյաղաքյ զապեy, խառջ առեy էկավ, ես ի՞նչխ էլնեմ էփա լաճուն ըսպանեմ, վի՞ր ծեռ կէրթա իփոր որ սպանե:

Կնիյն ի, կասի. - Թե որ չե՞ս ուզե քյո ախչիկ կուրիսվի, պիտի ինչխ էլե, էտա տղին կուրիսցույես:
Թաքավորն ի, կասի. - Աղեկ, տյու կնա, ես պանն կանեմ:
Էսա թաքավորու կնիկ որ կէրթա, թաքավոր կկանչի ուր վազրին, հալ-հեքյաթ բիթուն էլ մ'էլ կպատմի ուր վազիրին, կասի. - Մեյ ճարըմ պիտի անես, որ էսա տղին մեյ քյեշիտ կուրիսցույես:
Վազիրն ի, կասի. - Մեկ-էրկօր ժամանակ տուր զիկ, թաքավոր ապրած կենաս, ես ինոր ճարըմ կկընդնեմ:
Էսա վազիրն ի, իրեքյ օր կթմմի, կուգյա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, կիտես ի՞նչ պիտի անես, որ քյո փեսեն կուրիսցույես:
Թաքավորն ի, կասի. - Ի՞նչ պիտի անեմ, վազիր:
Վազիրն ի, կասի. - Կիտես թաքավոր ապրած կենաս, ի՞նչ պիտի ուզես քյո փեսից, որ չկանա պիրե, էրթա կուրիսի մնա չեռլ-չիմահյտեր: Քյո փեսից պիտի ուզես Չեռլ-Դավասին, որ չկանա պիրե, էրթա բես-րիթուն կուրիսի, բալքյի պոծնես ծեռնից:
Թաքավորն ի, հման ուր խալայեղներաց կկանչի, կասի. - Կնացեքյ մեր փեսին կանչեքյ, թող գյա իմ էօղեն:
Կէրթան կկանչեն, կպիրեն թաքավորու մոտ:
Թաքավորն ի, կասի. - Ա՛յ կտրիճ տղա, ես քյեզնից կուզեմ, որ էրթաս պիրես Չեռլ-Դավասին:
Էսա լաճն ի շատ կմտածի, կմտածի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես ուրտեղի՞ց պիրեմ:
Թաքավորն ի, կասի. - Չեմ կիտե, ուրտեղից որ կճարես՝ ճարի, մենակ ես քյեզնից կուզեմ:
Էսա լաճն ի, թաքավորի սարից կելնի տյուս, մռութ-մալուլ կելնի կէրթա ուր ծիյու մոտ, ծիյուն խոտ-պան կուտա, ջան կթիմրի, կմաժի:
Էսա ծին ի, որ կտիսնա ուր տիրոչ մռութ տխուր էլնել, կասի. - Իմ տեր, -կասի, - քյե ի՞նչ էլե, ըսկնա մռութ-մալուլ ես էլ մ'էլ:
Լաճն ի, կասի. - Ի՞նչ ասեմ, թաքավոր ըսկուն պան ասաց, որ խելքյս գյլխուց կէրթա, չեմ կիտե, ի՞նչխ անեմ:
Ծին ի, կասի. - Ի՞նչ էլե, զիկ ասա, մառախ մ'անե, ես իտոր ճարճամբախ կկընդնեմ:
Լաճն ի, կասի. - Իմ թաքավոր զիկ ասաց, որ պիտի էրթաս Չեռլ-Դավասին պիրես: Մկա մնացեր եմ մեչտեղ, ես ուրտեղի՞ց էտա Չեռլ-Դավասին կընդնեմ:
Ծին ի կասի. - Իտոր խամարն է՞ղ մառախ կանես, իսկի մառախ մ'անե, էտա իմ ծօխ ուտաց պան ի:
Լաճն ի, որ էսա պան կլսի, շատ կուրախանա, ուր ծիյու աչկեր կպռնի, կպաքյի:

Ծին ի կասի. - Կիտես ի՞նչ պիտի անես. կերթա̈ս թաքավորույ քյառսուն տիկ գյինի կուզես կպիրես: Էտա քյառսուն տիկ գյինին կառնենքյ մեյտրա կերթա̈նքյ, կերթա̈նքյ կխասնենքյ մեյ խատ փոսիմ մոտ: Էտա փոսի մոտ մեյ խատ ճո̈չ կաղնի ծառըմ կա, էտա ծառի տակն էլ մեյ խատ ուրիշ փոսըմ կա, էտա գյինիքյ բիթո̈ւն կլցես էտա փոսի մեչ, տյուն էլ կէլնես վեր էտա ծառին, չվանով կայիմ քյե կկապես ծառի ճողին, կմնաս դա̈: Էն տեղից մեկ էլ կտիսնաս, որ Չեռլ-Դավասին փընչփընչալեն կուգյա: Ըսկուն կըփնչա որ էսա ծառ դա̈լա̈ր խոտի պես կերթա̈ էնդեխ, կուգյա էսդեխ: Համան տյու կայիմ պիտի մնաս վեր ծառին, չէլնի ինիս տակ: Էտա Չեռլ-Դա̈վա̈սին ի, կուգյա, էսա փոսի մեչի գյինիքյ բիթո̈ւն կխմի. կխմի կպռծնի, կդա̈ռնա կասի. «Մեյ խատ ըստեղ ա̈տա̈մորդի էլներ, ես ըստեղ ինոր պատըռտի, ուտի»: Որ էսա խա̈րա̈ր կասի թե չէ՝ համան տյու ծառի վերվեն քյո չվանքտեր կառցկես, բիրդա̈ն կթռնես վեր Չեռլ-Դավասու քյսմկին, ինոր ակնջկներ կպռնես: Ես էլ էն գյախ կուգյամ կկայնեմ ինոր կուշտ, էլ էն պա̈ն չի կանա անե, ինոր կես ուժ զաթե կերթա̈, կհաղթվի, էն գյախ կառնես կպիրես կուտաս թաքավորուն:

Էսա̈ լաճն ի, որ կլսի էսա պա̈ն, շատ կուրախնա: Կէլնի կերթա̈ մոտ թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, զիկ քյառսուն տիկ գյինի տուր, որ էրթամ Չեռլ-Դավասին դո̈ր ի՝ կընղնեմ պերեմ:

Թաքավորն ի, ա̈մբ կանի վազիրին, որ քյառսուն տիկ գյինի տան ուր փեսին:

Քյառսուն տիկ էն մեկել օր կպերեն կուտան էսա լաճուն:

Լաճն ի, կխայնի ո̈ւր խալվներ, կխեծնի ուր ծին, քյառսուն տիկ գյինքյ կպա̈ռնա ճյորիյտերաց, կինեն ճա̈մբախ կերթա̈ն:

Շատ կերթան, քիչ կերթան՝ կերթան կխասնին մեյ խատ դա̈րի մը մեչ: Որ կխասնեն էտա դա̈րի մեչ, էտա տեղ աղորթմանց, մեյ խատ ճո̈չ կաղնու ծա̈ռըմ կա, էտա ծառի տակն էլ՝ մեյ խատ փոսըմ կա:

Լաճն ի, կէճնի տակ ծիյուց, ճեռրիքյ կքյաշի, կպերի գյինու տկեր, ինչ կանդար որ գյինի կա, կդառդկի էտա փոսի մեչ, ծին կթողնի էնտեղ առծայս, ինքյն էլ ծիյու ասածի պես չվան կառնի, կէլնի վեր ծառին: Կէլնի վեր ծառին, մեյ խ.ատ խորոտ ճողմ կկընդնի, կնստի վերեն, էտա չվանով խորոտմ ուր ոտկեր-ծեռքեր կկապի էտա ծառի ճողերաց, որ սաստիկ քյամի էլնի՝ չէլնի ինի տակ: Ոտկեր-ծեռքեր կկապի վեր էտա ծառին, կմնա դեռըըմ գյախ էտա տեղ:

Քիչ սորա կտիսնա որ ի՞նչ. սարի էն մեկել թարաֆեն մեյ խատ չանգյ աշխա̈րըմ ճո̈չ հա̈յվանըմ կուգյա. ըսկուն էլ փնչա որ բիթո̈ւն ծառեր չանգյ պարակ խոտըմ կերթան կուգյան, էսա լաճն էլ ծառի վերե ըսկուն կերթա̈ կուգյա:

Լաճն ի, կփիսնա, որ էփա հայվան էկավ, կայնավ վեր էփա գյինու փոսին:

Չեռլ-Դավասին է, էկավ կայնավ վեր էփա գյինու փոսին, բաշլայեց էփա գյինքյ բիթուն խմել: Կխմի կպոծնի, կդառնա մեյ խապ գյլեոխ կվերուցի վեր, կասի. «Ըհը՜մ, մեյ խապ ափամորդի էլներ ես ըսփեղ պապըռփի, ուփի»: Կասի, ափմներ կզընգյզընգյայցուցի:

Էսա լաճն ի, ծառի վերեն որ կփիսնա էսա Չեռլ-Դավասին էսակնա̈ պան կասի, համան ու ծեռայ-ոփայ չվայիփեր կառցըկի, բիրդան ուր կթա̈լի վեր էսա Չեռլ-Դավասու քյամկին, ակնջկներ կպռնի, կկայնի: Էդա ծին էլ էնդեխից կուգյա, կուգյա կկայնի էսա Չեռլ-Դավասու կողի մոփ:

Չեռլ-Դավասին ի, որ կփիսնա էսա ծիյուն, կճանչընա որ ուր կուրիսած բալեն ի, կբաշլայի իսոր քյիթ-մռութ բիթուն լիզել:

Սորա Չեռլ-Դա̈վա̈սին կփիսնա որ ուր քյամկի վերեն իսան ա̈փամորդին ի կայնե, զաթի ոգից կինի, կդա̈ռնա մոնչալեն կասի. - Ափամորդի, փյու զիկ հաղթեցիր, մկա էլ պան չեմ կանա անե քյե, մկա ինչխ կուզես՝ ըսկուն արա, որփեղ որ կփանես, ես պիփի գյամ, էլ պան չեմ կանա անե:

Էսա լաճն ի, գյեո խեծե վեր Չեռլ-Դավասուն, կուգյա կխասնի թաքավորու դռան առա̈ճ:

Խաբար կփանեն թաքավորուն, կասեն. «Թաքավոր ապրած կենաս, քյո փեսեն էկավ, Չեռլ-Դա̈վա̈սին էլ իպե խեփ»:

Թաքավոր ինա̈ն ուր վա̈զիրն ի, կզարմանան էսա լաճու վերեն, ուրենքյ-ուրենքյ կասեն. «Մենքյ էօրեոխկեցինք, ասինքյ էրթեր կուրիսեր պա̈լքյի, չէ, էսա էլ մ'էլ պուպույի պես պյուսավ»:

Կէրթա̈ն գյեո առոքյ-փառոքյ էսա փեսին կպիրին թաքավորու մոփ:

Թաքավոր կելնի էսա լաճու ճակափ կպա̈քյի, կասի. ապրես, իմ կփրիճ:

Չեռլ-Դա̈վա̈սին ի, ըսկուն ճո̈չ ի, որ փեղ չէլնի կապին: Կպիրեն նոր մեյ խապ ճո̈չ փու' մը կշինեն, էսա Չեռլ-Դա̈վա̈սուն կկապեն էնփեղ:

Թաքավորի կնիյն ի, ուրախցե վեր ուր փեսի կփրճութնեն, ինքյ ուր կասի. «Սկա իմ փեսեն էլ չեմ ավափա, որ ամչնա իմ ախչկան մոփեն, իլալա, իմ ախչկա ուզածով կանի»:

Լաճն ի, գյեո իկե նեղայցուկ, կէրթա̈ կպառկի ուր կառյոլի վերեն, չուր լո̈ս խանգյիսփ կքյնի:

Թաքավորու ախչիյն ի, կիշեր չո̈ւր լո̈ս կաչկի որ էսա լաճ էքթա̈ ուր մոփ, կաչկի-կաչկի հւա̈դա̈ չո̈ւր լո̈ս: Կփիսնա, որ էսա լաճ նա̈ կուգյա, նա̈ լեզու կթըռճի բիլա̈:

Առապուն էսա ախչիյն ի էլմ'էլ ժառանգյ խառնակ կէլնի կէրթա դողրի էլմ մոփ մեր: Կպապմի մոր. թե էլմ'էլ իսկի կարևորութեն չփվեց, պառկավ չուր լոս փըռ-թըս քյնավ. կէրթաս թաքավորուն կասես՝ յա էսա լաճուն կըսպանես, յա կուրիսցուցես, յա չէ՝ ես զիկ կըսպանեմ:

Թաքավորու կնիյն ի կէլնի կուգյա մոփ թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, մեր փեսեն էլմ'էլ մեր ախչկան կարևորութեն չի փվե, կնայե էօղեն, իրիկվնե չո̈ր առապուն պառկե, փըռ-թըս քյնե, առապուն էլե թողե կնայե ուր պանի խեփ: Իսկի բիլա̈ լեզու չթըռճե ախչկան խեփ: Վարիաս, ինչխ առաճ՝ մկա էլ մ'էլ ըսկուն: Ախչիյն էլ առապմե խառն էլավ էկավ մո զիկ գյանգյափ: Ասաց. «Ես ըսկնա մարթ չեմ ուզե, յա̈ իմ մարթ կուրիսցուցեքյ, յա̈ կըսպանեքյ, յա̈ չէ՝ ես էսա փնեն կթողնեմ կէրթամ կուրիսեմ»:

Էսա թաքավորն ի, կասի. - Կնիկ. վի՞ր ծեռ կէրթա էփա բաբագյիթ փղին սպանե, կամ կուրիսցուցե: Էն պղեն որ ինչ ուզեցի, աշխըրիս վերեն ինչ կանդար որ զոռ պան կեր՝ պիրեց, ես ի՞նչ էփա լաճուն զայ անեմ: Պան չկա, փյու ախչկան համոզի, ասա՝ փղեն ալա թազա յի, կամչնա, սորա կպայվի, թող չմփածի:

Թաքավորու կնիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ախչիկ չի փաղրե, թե որ էսօրվնից չկուրիսցուցեքյ, ես կէրթամ կկուրիսիմ, ճար չկա, ես էս կանդար ասի՝ ճար չէլավ:

Թաքավորն ի, որ կփիսնա ճար չկա, կնգյան կասի. - Աղեկ, փյու կնա, ես վազիրի խեփ կմփածեմ, մեյ պան կանենք:

Թաքավորու կնիյն ի, կթողնի կէրթա ուր էօղեն:

Թաքավորն ի, կնսփի շափ կմփածի, կդա̈ռնա խա̈բար կէօրեռխկի վազիրին, կկանչի ուր մոփ, կասի. - Վազիր, ի՞նչ անինքյ էսա մեր փեսի խեփ, էլ մ'էլ մեր ախչկան կարևորութեն չի փվե, բիլա̈ լեզու չի թռճե խեփ: Առապմե էլ մ'էլ էլեր էր, մերն էօրեռխկեր էր մո զիկ, ասեր էր թե՝ կամ էփա փղին կկուրիսցուցես՝ յա̈ չէ՝ ես կէրթամ կկուրիսեմ: Մկա ի՞նչխ անիմ, վազիր, էդա փղեն էլ ափսոս ի զա̈յ անենքյ, կփրիճ բաբագյիթ փղա յի, ծեռս էլ չէրթա̈ սպանել փամ, ի՞նչխ անեմ, չեմ կիփե:

Վա̈զիրն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, փղեն սպանելու փղա չի, համան քյո ախչիկ էլ չէլնե որ էրթա̈ կուրիսի, ուրիշներ որ լսեն, ի՞նչ կասեն: Կմնա մեյ պան, փղին ըսպանել չէլնե, ափսոս ի, հա̈ղն ի կանչես փղին, ասես. ես քյեզնից կուզիմ անմահական խնձյոր, որ չկանա պիրի: Թող էսա փնեն էլնի փյուս, մեր աչիչ թող չերևա, որփեղ կէրթա կմնա՝ էն էլ ուր քեոֆն ի:

Թաքավորն ի, կասի. - Վալա, էսա աղեկ խելքյ էր, - կասի, -

կդառնա ուր խալայեղներաչ խաբար կէօրեոէսկի. որ էրթան փեսին շուտ կանչեն, գյա ուր մոտ:
Խալայեղներն ի, կէրթան շուտ փեսին կկանչեն, կպերեն թաքավորի մոտ:
Թաքավորն ի, որ կտիսնա որ էսա լաճ էկավ, կասի. - Ա՞յ կտրիճ տղա, ես քյեզնից մեկ պան էլ կուզեմ, որ էրթաս որտեղ որ կա, կընդնես պերես, չկընդնես՝ իմ սարեն չմտնես:
Էսա լաճն ի, կասի. - Ասա տիսնամ ի՞նչ ի, թաքավոր ապրած կենաս:
Թաքավորն ի, կասի. - Կիտես ես քյեզնից ի՞նչ կուզեմ: Ես քյեզնից կուզեմ անմախական խնձյոր, որտեղ որ ի, պիտի էրթաս կընդնես, պերես, որ չպերիր՝ չի գյաս իմ տուն:
Էսա լաճն ի, որ կլսի էսա պան, բիրդան կմռթի, կբաշլայի մտածել. «Խենքյ ի՞նչ ճամբախ կընդնեմ որ կանամ էսա պանից սիվտակ երես տյուս գյամ»:
Էտասկնա մռութ-մալով թաքավորի տոնից էսա լաճ կէլնի տյուս, կէրթա դոդրի ուր ծիյու մոտ, կբաշլայի ծիյուն գյարի, խոտ տալ, քյամակ կտըփտըփի, կթիմրի: Էստեղ կնստի մոտ մսրին, խորոտըմ կուլա, կասի. «Ի՞նչխ անեմ, էսա ի՞նչ պան էր, որ էկավ վեր իմ գյլխուն»:
Ծին ի, կասի. - Իմ տեր, քյե ի՞նչ էլե որ էտասկնա մռութ-մալով ես, քյե ի՞նչ էլե, մեյ խաստ քյո տարտեր զիկ ասա, մեյ խաստ տիսնամ: Ասա, տյու ասա, ես քյո տարտին դարման բալքյի էլնեմ:
Տղեն ի, կասի. - Տյու ի՞նչ պիտի անես, էսա ընկուն պան ի, որ շատ զոռն ի: Կիտես ի՞նչ, թաքավոր կանչեց, զիկ ասաց. «Պիտի էրթաս զիկ խամար անմախական խնձյոր պերես, չիր չպերես՝ չի գյաս տուն»:
Էսա ծին ի, որ կլսի էսա պան, կասի. - Է՜յ վախ, քյո սովըրյուդոդի վիզ կոտրի, - կասի, - ընկուն պան ի ուզե՝ որ անկարելի յի, իմ կուվաթից էլ տյուս պան ի:
Ծին էլ կդառնա կասի. - Հառ ունես մտածելու:
Էսա տղեն ի, կասի. - Իմ Բազիկ, ես իմ հ'ույս բիթիւն քյո վերեն ի տրե, - կասի, - գյեռ իմ Բազիկ կիտի ճար-ճամբախ, մկա էսա պան քյո վոժից էլ տյուս պան ի, ինչ պիտի անենքյ, չեմ կիտի:
Չեռլ-Դավասին ի, էնդեխից կլսի խոնց տված խաբրներ, կասի. «Հա՜, էսականդար պաներ որ կաներ էսա տղեն, մայար զինքյ չէր, բիթուն իմ Բազկե մարիֆաթն էր»: Կդառնա կասի. «Քյանի որ էսա զմեն պան էլ իմ Բազիկն արե, մկա էսա չի կանա անե. որ տյուքյ էլ ընկնա մեյմեկելու խետ ախպոր պես էքյ, մեյ-մկու շատ կուզեքյ, իմ Բազիկի խաթրի խամար էտա մեյ պան էլ ես պիտի անեմ»:

Լաճուն էսա Չեռլ-Դավասին կասի. - Տղա, - կասի, -մառախ մի անե, կիտես ի՞նչ պիտի անես: Կէրթաս թաքավորին կասես. «թաքավոր ապրած կենաս, էտա ե՞լ պան ի, համան թող քյո ուզած անմախական խնձյոր էլնի, տուր զիկ մեյ խատ ոսկիթել չանթիկըմ, որ տանեմ լցեմ մեչ, պերեմ: Քյե ոսկիթել չանթիկըմ կուտա՝ կառնես կպերես:

Լաճն ի, կէրթա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո ուզած համան թող անմախական խնձյոր էլնի. տյու ամր արա՝ թող զիկ մեյ խատ ոսկիթել չանթիկ տան՝ որ տանեմ լցեմ ինե, պերեմ:

Թաքավորն ի, ամր կանի վազիրին, որ ուր փեսին մեյ խատ խորոտ, ոսկիթել չանթիկ տան:

Խալայեղներ կպերեն մեյ խատ խորոտ, ոսկիթել չանթեմ կուտան էսա լաճուն, լաճն էլ կառնի, կէրթա ղողրի մոտ Չեռլ-Դավասին:

Չեռլ-Դավասին ի, կտիսնա որ լաճ ոսկիթել չանթիկ պերեց, էսա լաճուն կդառնա կասի. - Ա՜յ տղա, ականջ արա տես ինչ կասեմ, ինչ որ կասեմ՝ խորոտ ականջ արա, միտքտ պախի, որ մե-մեկուր տեղ անես:

Չեռլ-Դավասին ի, կասի. - Ըստեղից կէլնենքյ տյուս՝ կինկնենքյ ճամբախ կէրթանքյ կխասնենքյ մեյ խատ սարիմ տակ: Էտա սարի տակ մեյ խատ ճիչ խաստ չամի ծառըմ կա: Որ կխասնենքյ դա, զիկ կկապես էտա ծառին, տյուն էլ էտա ոսկիթել չանթիկ կթալես թևտ, կէլնես կտռճվես սարի էն մեկել երես, ալս չուր էսօր շնչավոր մարթ էնտեղ չի կառցե ընկե: Որ էտա սար կընցնես էն մեկել իրես, կտիսնաս որ մեյ խատ ճիչ գյերեզմանատուն ի, մեչ բիթուն խորած մեռել ին: Քիչըմ էնդեխ զաթի անմախության պախչեն ի, կէրթաս կմտնես էտա պախչեն, էտա պախչի մեչ աշխրիս վերեն ի՞նչ տեսակ եմիշ որ ասես: Էտա պախչի մեչեն կէրթաս մեկ էտա ոսկիթել չանթիկով կլցես խնձյոր, կթալես թևտ, կդառնաս կէրթաս: Պախչի օրթեն մեյ խատ խաստ խնձյորի ծառըմ կա, զէտա խնձյորի ծառի վերեն իրեքյ խատ խնձյոր կա, էլ ավիլի չկա, կէլնես էտա խնձյորներ կքյաղես, կպիրես, մեկ կպախես քյե, մեկ կուտաս զիկ, մեկն էլ կտանես քյո կընգյան: Էտա խնձյոր քյաղելու գյախ և էտա .գերեզմանի մեչի բիթուն մեռլներ կհ'արեն, կէլնեն տյուս ուրենց տեղից, կինեն քյո ետև, կասեն. «Ա՜յ շնչավոր, մե խանգյիստ թող, մե մեր տեղեն մի իրար տա, մեղքյ ինք, ինչի՞ մեր խանգյիստ կխանքարես»: Ինչ կանդար որ կասեն, քյե կանիծեն, համան տյու իսկի էնտեխրանքյ մի էլնե: Կքյաղես կպոծնես, ծառից կէճնես տակ, առանց ետևտ իրիշկալու կուգյաս: Չէլնեմ, չիմանամ որ ետևտ իրիշկաս, խետ որ իրիշկաս բիրդան կտառնաս քյար: Առանց ետևտ իրիշկալու կուգյաս չուր մոտ զիկ:

Էսա լաճն ի, կէլնի Ձեռլ-Դավասին ուր փեղից կքաշի փյուս, Բազիկն էլ կիսկի իփև, կէլնի կխեծնի վեր Ձեռլ-Դավասուն, կինեն ճամբախ, կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթա̈ն, կէրթան շատ սար կընցնին, շատ ձյոր կկտրին, շատ գյետեր կընցնին, կէրթան կխասնեն չուր Ձեռլ-Դավասու ասած տեղ: Կէրթան կխասնեն էն ճո̈չ սարի տակ:

Էսա լաճն ի, Ձեռլ-Դավասին կկապի էտա ծառին, ինոր Բազիկն էլ ուր կշտի խետ, ինքյն էլ կառնի ուր ոսկիթել չանթիկ, կթալի թև, կէլնի կինի ճամբախ, կէրթա̈: Կէրթա, կէրթա սարը կընցնի էն մեկել իրես, կտիսնա որ ի՞նչ. էտա օվեն քյանի աչկտ կպռնի՝ սատա ծառ, ճո̈ղ, ճո̈ւր, խոտ. վարիասլ աշխրիս մեչ ինչ կանդար որ խորոտկութեն կա՝ գյեռ էտա տեղն ի, էն մեկ յանն էլ սատա գյերեզմնոց ի:

Կէրթա, կէրթա̈ կմտնի էտա անծեր իգյու մեչ, կէրթա կէլնի խնձյորիմ ծառ, կքյաղի անմախական խնձյորից, կլցի էտա ուր ոսկիթել չա̈նթիկ, իլեն կանի, կէճնի տակ ծառից, տռպրակ կթալի թև, կինի էտա իգյու մեչ, կփտռի էն ճո̈չ խնձյորի ծառ, որ Ձեռլ-Դավասին ասեր էր, վերեն մենակ իրեքյ խատ խնձյոր կա: Կփտռի, կփտռի, վարիասլ կէրթա̈ դողրի էտա բաղի օրթեն: Կտիսնա որ աղորթմանց մեյ խատ ճո̈չ խաստ խնձյորի մը ծառ, վերեն էլ իրեքյ խատ խնձյոր կա: Համան շո̈տըմ թաթեր, սոլեր կխանի, կէլնի ծառ, կբաշլայի էտա իրեքյ խնձյորներ քյաղել: Որ կբաշլայի էտա խնձյորներ քյաղել, էտա կշտի գյերեզմնոցի մեռլներ կբաշլայեն ուրենց վերվի քյարեր ճխթել խանել պանցր. խող կուտան էնդեղ կէլնեն փյուս ուրենց տեղրայիտերաց, կէլնեն տուտաղ կնստին ուրենց գյերեզմնոցի մեչ, կբաշլայեն բիթո̈ւն մեյտըրա բոռալ էսա լաճու վերեն, ասել. «Ծո ա̈տա̈մորդի, է՞հ խողածին, էտա ի՞նչ ի կանես, մե ինչի՞ խանգյիստ չես թողնե, խերիքյ ի մե էսա գյերեզմնոցի մեչ չա̈րչա̈րեքյ, ի՞նչի մե դա̈ղա̈ր չեքյ թողնե, ախր մեղքյ ի, է՜, թե փյու ասպած կպաշտես, էտա պա̈ն մի անե, մե խանգյիստ թող, էտա խնձյորներ մի քյաղե, մե մի անե գեռոնա̈ղա̈բ, թող մե մեր տեղ»:

Էսա լաճն ի, առանց ականջ անելու էսա մեռլներաց՝ կէլնի ծառ, էտա իրեքյ խնձյորն էլ կքյաղի, կդնի չա̈նթի մեչ, կէճնի տակ, սոլեր կխայնի առանց իտև իրիշկալու, կպռնի ուր ճա̈մբա̈խ, հայդե բաբամ՝ կէրթա̈, իսկի էլ կարևորութեն չի տա մեկուն:

Մեռելներն են, կտիսնան որ էսա լաճ խնձյորներ քյաղեց, իւրիր ուր չանթեն, առանց ուրենց ականջ անելու ուր ճամբախ պռնեց, կնա̈ց: Բիթո̈ւն մեյտրա̈ էն գյախ կբաշլայեն բոռալ, ճվալ. «Ի սեր քյո պաշտածին, խողածին, մի անե էսա պւա̈ն խետ մե, մե խանգյիստ թող»:

Էսա տղեն ի, առանց ականջ անելու ուր ճանբախ կքշի:

Մեռելներն ի, կփիսնան որ ճար չկա, էսա փղեն փարավ էփա իրեքյ խնձյորներ, կբաշլայեն էլ ինչ կանդար որ ւանեծքյ կա իսրա գյլխու վերեն կկարփան: Կասեն. «Թե որ լաճ ես՝ ախչիկ դառնաս, թե որ ախչիկ ես՝ լաճ դառնաս պալքյիմ, փյու ինչի՞ մե մեր փեղից խանիր, իսկեյիր վըր էսա աշխրիս»:

Էսա լաճն ի, էփա մեռլներ որ ըսկնա կանիծեն էսա լաճուն, էսա լաճն ի կըչքա որ աղորթմանց ինքյ փոխվեր ի, էլե ուրիշ փեսակ փղա:

Տղեն ի, կառնի էփա չանթիկ իլին խնձյոր ինաւն էփա իրեքյ խնձյոր, կուգյա: Կուգյա, կուգյա սարից կդառնա էսա մեկել իրես, կփիսնա որ Չեռլ-Դավասին ինաւն ուր Բազկեն էնփեղն ին: Կուգյա կմոփոխասնա իդոնց, էփա մեկ խնձյոր կուփա Չեռլ-Դավասուն, էն կուփի: Էն երկուսն էլ կպախի ուր մոփ: Սորա կէլնի, կխեծնի Չեռլ-Դավասին, կինի ճամբախ, Բազիկն էլ կիսկի իւրե, կդառնա կուգյա: Կուգյա կխասնի ուր թաքավորու խող: Որ կուգյա կխասնի թաքավորու խող, էնփեղից նոր կբաշլայեն յավաշ-յավաշ գյալ ղան:

Կուգյա կխասնի թաքավորու սարի փռան առած, կէճնի փակ Չեռլ-Դավասու վերվեն, կփանի ներս, կկապի, կորմ-ճուր կուփա, կդառնա կուգյա թաքավորի մոփ:

Խալայեղներն ին, խաբար կփանեն թաքավորուն՝ թե քյո փեսեն էկավ:

Թաքավորն ի, շափ կուրախնա, կէլնի շոփմ խաբար կէօրեոխկի փեսին կկանչի:

Էսա լաճն ի, կէրթա ուր խալվներ կփոխի, կէրթա համամ կլոխկնա, կուգյա խնձյորի չանթեն կառնի, կէրթա դոդրի մոփ թաքավոր:

Լաճն ի, խեփ կմփնի թաքավորու էօղեն, էփա ոսկիթել չանթեն որ ուզեր էր թաքավորից, ինրով իլին խնձյոր կփանի կփնի թաքավորի առած, կասի. - Առ, թաքավոր ապրած կենաս, էսա չէ՞ր քյո ուզած:

Թաքավորն ի, խեփ կփիսնա ուր փեսին որ խնձյորներ պերեց, համան ուր փեղեն կէլնի վեր, կուգյա էսա լաճուն կփանի կնսփըցուցի ուր կշփի խեփ, կասի. - Իմ կփրիճ, թոսուն փղա, ի՞նչ որ ասիս արժեց, իմ մենակ ժառանգյ պիփի էլնես, իմ մեռնելուց սորա իմ թաքավորութեն պիփի մնա քյե:

Թաքավորի ախչիկն ի, որ կլսի ուր մարթն էլ մ'էլ էկավ, ժառանգյ կխասնի, մռութ կկախի, կնսփի:

Որ իրիկուն կէլնի, էսա լաճն ի, կառնի էն երկու խնձյորներ, կէրթա ուր էօղեն:

Պառկելու գյախ որ կէլնի, էսա լաճն ի, լեզուն կբաշլայի սլայվել,

խարար կուտա. կուտա, կդառնա էտա խնձյորի մեկն էլ կուտա էտա ախչկան, կասի. - Առ, առ իմ սիրուն աղավնի, առ կե. էտա խնձյոր որ կա՝ անմախական խնձյորն ի:

Ախչիյն ի, կառնի ուրախ-ուրախ էտա խնձյորն կուտի, չուր առատուն էտա լաճու խետ քեռֆ-ուրախութեն կանեն, առատման թուրաֆ կպառկին, կքյնեն:

Առատուն էսա ախչիյն ի, կէլնի վեր, ուրախ-ուրախ կէրթա մոտ մեր, մոր կասի. - Մարե, էսա կիշեր իմ մարթ թողզ խաբար տա, զիկ մեյ խատ էլ անմախական խնձյոր էր պերե ափիյա:

Մերն ի, կասի. - Ես քյե չասի՞, քյա ախչիկ, կտորըմ սբրի, տղեն ալա թաժա իկե, կամչնա, տյու զիկ ականջ չիր անե:

Էսա լաճն ի, մեկ օր թաքավորուն կասի. - Թաքավոր ապրած կենաս, զիկ իզին տուր, ես մեյ խատ էրթամ իմ տուն, իմ խոր ինաւն քյուրոչ մոտ, տիսնամ խենքյ ինչ հալի մեչ են:

Թաքավորն իզին կուտա էսա լաճուն: Էն մեկել օր առատուն էսա լաճն ի, կինի ճամբախ, կէրթա ուր խեր ինաւն քյոր կընդնի բալքյի:

Կէրթա, կէրթա կխասնի ուրենց դռան վերեն, կտիսնա որ ուրենց տնից մեյ խատ մեռել կխանին տյուս:

Էսա լաճն ի, կխառցուցի ըստեհ էնղեխ, թե էսա վո՞վ ի մեռի՞. վարիասլ կխասկընա, որ ուր խերն էլե:

Բիրդան ներս կմտնի, կէրթա դողրի ուր քյուրոչ մոտ: Կէրթան ուրենց խոր կխորեն, կպոծնեն կուզյան, ուրենց էլած-չէլած կանեն մեկ պեռան պան, կուզյան դողրի թաքավորու մոտ:

Էսա լաճն ի, ուր քյուրոչ կտանի թաքավորի մոտ, կասի - Թաքավոր ապարծ կենաս, էսա էլ իմ ճո՛չ քյորն ի:

Թաքավոր շատ կուրախնա վեր իսոր, էն էլ կուտա ուր վազրի լաճուն:

Ավուր մեկ, էսա թաքավորի մեռնելու օրեր էկեր ի, կկանչի ուր փեսեն ուր վազրի առճև կասի. «Իմ մեռնելուց սորա իմ երկիր տյու պիտի կառավարես»:

Աղորթ, ինոր մեռնելուց սորա թաքավորությունն մնաց էսա լաճուն: